ՀՐԱՉԵԱՅ ԹԱՄՐԱԶԵԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

# ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՆԵՐԲՈՂԵԱՆ ԱՍԱՑԵԱԼ Ի ՍՈՒՐԲՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻ» ԵՐԿԸ

Նարեկացիագիտության կարեւորագոյն խնդիրներից է Անանիա փիլիսոփայի անունով պահպանուած Վաղարշապատի Սուրբ Կաթողիկէ եկեղեցուն նուիրուած ներբողի հեղինակային պատկանելության հարցը: Ներբողի խորագիրն է «Երանելոյն Անանիայի հոգեշնորհ փիլիսոփայի ներբողեան ասացեալ ի Սուրբն Կաթուղիկէ եկեղեցի, որ է ի Նոր քաղաք, որ այժմ կոչի Վաղարշապատ, յորում տեղուոջ ցուցաւ հրաշալի տեսիլն մեծի նահապետի սրբոյն Գրիգոր Լուսաւորիչի» (այսուհետ՝ Ներբող):

Նորագոյն շրջանի ուսումնասիրողներից Յ. Քէոսէեանի «Անանիա Սանահնեցի» մենագրության մէջ այն զետեղուած է Սանահնեցուն պատկանող երկերի շարքում[1]: Իր այս տեսակէտը հեղինակը փորձել է ամրապնդել Կիրակոս Գանձակեցու մի տեղեկությամբ, ըստ որի Անանիա Սանահնեցին հեղինակել է մի ներբող՝ նուիրուած Շողակաթ եկեղեցուն.

«Իսկ յԱրեւելս արք անուանիք եւ գիտնականք՝ լուսաւորիչք եկեղեցւոյ՝ Անանիա վարդապետ ի Սանահինն, յաւուրս Դէոսկորոսի, այր մտաւոր եւ հանճարեղ, գիտող տոմարական արհեստի եւ գրոց ասպուածայնոց մեկնող: Սորա ասեն ի մի հաւաքեալ ի մեկնութիւնն առաքելոյ... արար եւ խորհրդական եւ մտաւոր տեսութիւն եւ համեմատութիւն Աւետարանացն ... գրեաց եւ լուսաւոր իմացուածս վասն խորհրդական սրբասացութեանս, որ յեկեղեցիս ուղղափառաց Խաչեցարիւ ասեն, եւ զՆերբողեանն Շողակաթին»[2]:

Այստեղ նշենք, որ Գանձակեցու վկայակոչման մէջ երկու Անանիաների՝ Նարեկացու եւ Սանահնեցու երկերի շփոթ կայ, քանի որ յիշատակուող «Վասն խորհրդական սրբասացութեանս, որ յեկեղեցիս ուղղափառաց խաչեցարիւ ասեն» երկը Անանիա Նարեկացու «Հաւատարմատ» դաւանաբանական-իմաստասիրական ժողովածուի մասն է կազմում[3], եւ դա իր մենագրության մէջ նշում է նաեւ Յ. Քէոսէեանը[4]:

Ներբողը Անանիա Նարեկացուն են վերագրել «Նոր Հայկազեան բառարանի» հեղինակները, Ս. Սոմալեանը, Կ. Նոյմանը, Մ. Մսերեանցը, Յ. Տաշեանը, Ն. Զամինեանը, Կ. Կոստանեանցը, Հ. Աճառեանը, Ն. Ակինեանը, Ա. Ղազինեանը, Հ. Միրզոյեանը[5]:

---

1 **Յ. Քէոսէեան**, Անանիա Սանահնեցի, Ս. Էջմիածին, 2000, էջ 19-42, 117-156:

2 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք - Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 112-13:

3 Այս մասին տե՛ս **Հ. Հ. Թամրազեան**, Անանիա Նարեկացի, Երեւան, 1986, էջ 74-117:

4 **Յ. Քէոսէեան**, նշվ. աշխ., էջ 94-95:

5 ՆՀԲ, Ա, էջ 9: **Somal P. S.**, Quadro della storia letteraria di Armenia, Venezia, 1829, p. 60-61: S. Neumann, Versuch Geschichte der armenishen literature, Leipzig, 1836, s. 127-128: **Մ. Մսերեանց**, Անանիա Նարեկացի, «Ճռաքաղ», 1859, հտ. Ա, տետրակ Բ, էջ 261: **Հ. Տաշեան**, »Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միխիթարեանց ի Վիեննա«, Վենետիկ, 1895, էջ 1057: **Ն. Զամինեան**, Հայ գրականության պատմութիւն, Ա, Նոր Նախիջեւան, 1914, էջ 145: **Կ. Կոստանեանց**, Ստեփանոս Օրբելեան, Ողբ, էջ 13, **Հ. Աճառեան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երեւան, 1942, էջ 148-151: **Ն. Ակինեան**, Դաւիթ Հարքացի, Անյաղթ փիլիսոփայ, Վիեննա, 1959, էջ 126: **Ա. Ղազինեան**, Ներբողը հայ հին գրականության մէջ. Հայ միջնադարեան գրականության ժանրերը (յող.

Յենուելով Կիրակոս Գանձակեցու նշուած վկայութեան վրայ՝ Ներբողը Անանիա Սանահնեցուն են վերագրում Ե. Դուրեանը, Գ. Զարբհանալեանը, Մ. Մուրատեանցը, Բ. Սարգիսեանը, Կ. Ղաֆադարեանը, Յ. Անասեանը[6]:

Ըստ Կիրակոս Գանձակեցու, Անանիա Սանահնեցու Ներբողը նուիրուած է եղել Շողակաթ եկեղեցուն, որ ուսումնասիրողներից ոմանք նոյնացնում են Վաղարշապատի Կաթողիկէի հետ:

Յ. Քէոսէեանը վկայակոչում է նաեւ Վարդան վարդապետ Հաղբատեցու «Բարձրացուցէք»-ի մեկնութեան հետեւեալ յիշատակութիւնը՝ «Ի շինութեան եկեղեցեացն ի Վաղարշապատ քաղաքի, վասն ներբողելոյ յԱնանիայէ զայնր նաւակատեաց տաւնս» (ՄՄ, ձեռ. թ. 2020, թերթ 239ա, թ. 3276, թերթ 113ա):

Սակայն այս հատուածում պարզ չէ՝ Անանիաներից ո՞րի մասին է խօսքը, եւ խօսւում է ոչ թէ Վաղարշապատի Կաթողիկէի, այլ քաղաքի եկեղեցիների շինութեան մասին, որոնց նաւակատեաց տօներն է ներբողել հեղինակը:

Ներբողը պահպանուած է երկու տարբերակով: Մաշտոցեան Մատենադարանի թ. 2216 ձեռագրում (երկրորդ տարբերակ) այն վերագրուած է Անանիա Սանահնեցուն. «Անանիայի Սանահ[ն]եցւոյ ասացեալ ներբողեան ի վերայ Սրբոյ Էջմիածնայ» (թերթ 141ա-151ա):

Այս ձեռագիրը XVIII դարի է (1766 թ.), եւ, ըստ ուսումնասիրողի, շեղւում է նախնական տարբերակից: Ըստ հեղինակի, այս ձեռագիր տարբերակն աւելի ուշ շրջանների ազդեցութիւններ է կրել: Այնուամենայնիւ, այն իր հիմքում ունի նախնական տարբերակը, որի մի շարք հատուածների համառօտման հետքեր է կրում:

Այս հանգամանքները հեղինակին հիմք են տալիս ենթադրելու, որ այն յօրինուել է 15-18-րդ դդ. ընթացքում, եւ առաջինի կերպարանափոխուած տարբերակն է: Համաձայնելով հեղինակի ներկայացրած փաստարկների հետ, հարկ ենք համարում նշել, որ այստեղ դարձեալ պարզաբանումների եւ ներքին աղերսների բացայայտման կարիք կայ: Ի վերջոյ, Վաղարշապատի անուան փոխարինումը Էջմիածնով կարող է հետագայ գրչի միջամտութեան արդիւնք լինել, այն էլ խորագրում, քանի որ բուն բնագրում Էջմիածինը չի յիշատակւում: Նոյնը վերաբերում է նաեւ այլ «կրօնաքաղաքական եւ հասարակական վերաիմաստաւորումներին», որոնք առկայ են Ներբողի այս տարբերակում:

Ներբողի այս երկու տարբերակների առկայութիւնը եւ բնագրային աղերսները չեն բացառում, որ երկրորդի դէպքում մենք գործ ունենք իրօք Անանիա Սանահնեցու Ներբողի հետ, որ մեծապէս օգտուել է իր նշանաւոր նախորդի համանման երկից:

Դրա ակնառու օրինակը նա տալիս է իր «Հակաճառութիւն ընդդէմ երկնաբնակաց» քառուածոյ ժողովածուում, ստեղծուած Անանիա Նարեկացու «Հաւատարմատ»-ի ամբողջա-

ժող.), Եր., 1984, էջ 154-155, **Հ. Միրզոյեան**, Գրիգոր Նարեկացու բանաստեղծական աշխարհը, Երեւան, 2006, էջ 7-55:

6 **Ե. Դուրեան**, Պատմութիւն հայ մատենագրութեան, Կ. Պոլիս, 1885, էջ 40-41, **Գ. Զարբհանալեան**, Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ-ԺԳ դդ..), Վենետիկ, 1897, էջ 532-534, **Մ. Մուրատեանց**, Պատմութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1872, էջ 423, **Բ. Սարգիսեան**, Անանիա թարգմանիչն եւ իւր գրական գործոց նմոյշներ, Վենետիկ, 1899, էջ ԺԹ, տողատակ, **Կ. Ղաֆադարեան**, Սանահնի վանքը եւ նրա արձանագրութիւնները, Եր., 1957, էջ 49, **Յ. Անասեան**, Հայկական մատենագիտութիւն, հ. Ա, Եր., 1959, էջ 775:

կան մասերի, քաղուածքների ու համառօտագրութիւնների հիման վրայ: Սակայն այս հարցը հետագայ ուսումնասիրութեան կարիք ունի:

* * *

Այս նշանաւոր Ներբողի նախնական տարբերակը Անանիա Սանահնեցուն վերագրելիս Յ. Քէոսէեանը, մեր կարծիքով, իր տեսադաշտից դուրս է թուել էական մի շարք հանգամանքներ՝ հեղինակի երկի ոճական յատկանիշները, բանաստեղծական-ճարտասանական տարերքը, բառաստեղծման յենքը՝ իբրեւ երկի յղացքի էական գործօն եւ յատկանիշ, ընդհանրապէս՝ տուեալ հեղինակի պահպանուած գրական ժառանգութեան, գրական այն միջավայրի ու դպրոցի շարակարգը, որտեղ գրուել է երկը: Այս կոնկրետ բնագրագիտական, լեզուաոճական վերլուծութիւնն ու քննութիւնն առաւել կարեւոր է ընդհանրական բնոյթի, յաճախ թէական դատողութիւններից ժամանակի հասարակական-քաղաքական մթնոլորտից բխող ինչ-ինչ դրդապատճառների, ժամանակի եկեղեցական գաղափարախօսութեան ընդհանուր ոգու եւ ուղղուածութեան մասին, ըստ որոնց նա փորձում է գործը վերագրել Անանիա Սանահնեցուն: Սակայն այս դէպքում անգամ երկն առաւել համահունչ է Անանիա Նարեկացու ապրած ժամանակաշրջանին եւ եկեղեցական գաղափարախօսութեանը[7], որ հակաքաղկեդոնական եւ հակաաղանդաւորական ուղղուածութիւն ունէր եւ որի կենտրոնական դէմքերից էր Անանիա Նարեկացին՝ մեծ մտածողն ու աստուածաբանը, հռետորն ու բանաստեղծը, որ, Անանիա Մոկացի եւ Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսների հետ ղեկավարում էր կենտրոնամէտ եւ հայրենանուէր այդ շարժումն իր բեղուն գրչով եւ իր գրական ու եկեղեցական-քաղաքական բուռն գործունէութեամբ: Բաւական է ասել, որ այս կաթողիկոսների պատուէրով է նա գրել իր դարակազմիկ երկու՝ «Ընդդէմ թոնդրակեցւոց» եւ «Հաւատարմատ», դաւանաբանական երկերը: Ընդ որում, «Ընդդէմ թոնդրակեցւոց» երկի պահպանուած հատուածը մի իսկական ներբող է Կաթողիկէ եկեղեցուն՝ յար եւ նման նշուած Ներբողին, որի հետ ակնյայտ նմանութիւններն ու համընկնումները հեղինակը համարում է ազդեցութեան արդիւնք:

X դ. ընդհանուր քաղաքական վերելքի, իմաստասիրական-դաւանաբանական ոգու եւ եկեղեցական քաղաքականութեան զարթօնքի վկայութիւն է յատկապէս Անանիա Նարեկացու «Հաւատարմատը», որի մի շարք գլուխներ կարեւոր տեղեկութիւններ են տալիս X դ. հայ եկեղեցու զօրութեան, դիրքերի ամրապնդման եւ աճող հեղինակութեան մասին երկրի ներսում եւ նրա սահմաններից դուրս, ուր հայ կաթողիկոսները հայադաւան թեմեր էին կարգում:

Այս փաստերն առաւել հաւանական են դարձնում այն վարկածը, որ այս Ներբողը գրուել է X, եւ ոչ XI դարում, երբ հայ եկեղեցու դիրքերը սասանուել էին, երբ չկար նրա երբեմնի ուժը եւ դաւանաբանական հզօր շարժումը, որի կենտրոնում Անանիա Նարեկացին էր՝ հռչակաւոր դաւանաբանն ու փիլիսոփան:

Հեղինակի պնդումը, որ այս գործը XI դ. հայ եկեղեցական շրջանակներում տիրող՝ կորցրած պետականութիւնը վերականգնելու համազգային բաղձանքների արտայայտութիւն էր, մեր կարծիքով, քննութիւն չի բռնում:

7 Այս մասին տե՛ս **Հ. Հ. Թամրազեան**, Անանիա Նարեկացի, էջ 74-117:

Կա նաեւ մի կարեւոր հանգամանք՝ ուսումնասիրողը չի համեմատում այս Ներբողը Գրիգոր Նարեկացու երկերի, յատկապէս նրա հանրայայտ ներբողների հետ, աւելին, անգամ չի նշում դրանք մինչեւ XI դ. եղած այս ժանրի գործերի շարքում:

Հարցը կարեւորւում է նաեւ նրանով, որ Գրիգոր Նարեկացու համանման ներբողները հոգեւոր-քաղաքական բուռն վերելքի արտայայտութիւններ են, յատկապէս նրա եռագրութիւնը՝ «Ապարանից Ս. Խաչի պատմութիւնն» ու Ս. Խաչի եւ Աստուածածնի ներբողները, վերջապէս, նոյն Անանիա Նարեկացու «Հաւատարմատն» ու «Ընդդէմ թոնդրակեցւոց» երկի պահպանուած հատուածը, որ նոյնանման ճարտասանական ոճերով գրուած ներբողի նը-մոյշ է:

Այս Ներբողը, ինչպէս նաեւ Գրիգոր Նարեկացու Եռագրութիւնը՝ ազգային զարթօնքի, հոգեւոր բուռն վերելքի արտայայտութիւններ լինելով, առաւել կապուած են Նարեկեան դպրոցի գրական միջավայրի, զարգացման զօրեղ ընթացքների հետ, որ աննախադէպ խորքերի ու թռիչքների տարան հայ հոգեւոր գրականութիւնն ու արուեստներն ընդհանրապէս: Այս առումով՝ Ներբողն ընկած է դպրոցի ձեւաւորման նախահիմքերում: Անգամ պարզ համեմատութիւնը ցոյց է տալիս, որ այն մեծապէս ազդել է Գրիգոր Նարեկացու բառաշխարհի եւ ընդհանրապէս նրա ստեղծագործութեան ձեւաւորման վրայ:

Հարկ է շեշտել՝ Անանիայի Ներբողը եւ Գրիգոր Նարեկացու եռագրութիւնը գրուել են նոյնատիպ շարժառիթներով՝ եկեղեցական համաժողովրդական տօնակատարութեան առթիւ: Գրիգոր Նարեկացու Եռագրութիւնը կապուած է վանական համալիրի կառուցման հետ, որին մասնակցում էին ողջ արքունիքը, հոգեւորականութիւնը, ժողովուրդը, Արծրունի երեք թագաւոր եղբայրները՝ Աշոտ-Սահակը, Գուրգէն-Խաչիկը, որը պատուիրել էր Գրիգոր Նարեկացուն գրել «Երգ երգոցի» մեկնութիւնը, եւ Սենեքերիմ-Յովհաննէսը[8]:

Դրանք, ուժի, զօրութեան, հզօր պետականութեան եւ հոգեւոր զարթօնքի արտայայտութիւններ լինելով, վկայում են, որ Ներբողը գրուել է պատմական-մշակութային վերելքի այդ ժամանակաշրջանում: Մնացած դէպքերում, պետականութեան կորուստի անմիջական տպաւորութեան տակ, առաւելապէս ողբեր են գրում:

Մինչդեռ, ներբողը «...Եկեղեցական-ազգային զարթօնքի մասին հեղինակի քաղաքական երազանքն է, որն այստեղ պետական իշխանութեան վերահաստատման յոյսով տոգորուած մի կոչ է՝ ուղղուած հայ իշխանաւորներին, հայ ժողովրդին առհասարակ: Ըստ այսմ, այն քաղաքական ինքնորոշման եւ կենտրոնաձիգ պետականութեան վերահաստատման գաղափարական խթաններից մէկն է հանդիսանում: Այսօրինակ դիտումները հնարաւորութիւն են տալիս գոնէ մօտաւոր ստուգութեամբ որոշել Սանահնեցու Ներբողի ստեղծման ժամանակը: Ելնելով Սանահնեցու վերոբերեալ բաղձանքից՝ կարելի է ենթադրել, որ Ներբողը ծնուել է պետականութիւնից զուրկ պայմաններում ...Վաղարշապատի իդէալականացմամբ կարելի էր քաղաքական իշխանութեան վերականգնման հնարաւորութեամբ յուսադրել ժամանակակիցներին: Նկատի ունենալով այս պարագան՝ թւում է, որ Վաղարշապատի ներբողը Անանիա Սանահնեցին գրել է Բագրատունեաց թագաւորութեան անկումից՝ 1045 թուականից յետոյ»[9]:

---

8 Այս մասին տե՛ս **Հ. Հ. Թամրազեան**, Սուրբ Գրիգոր Նարեկացու կեանքը, Եր. 2005, էջ 24-28:

9 Անդ, էջ 23-24:

Անմիջապէս ասենք, որ ազգային-քաղաքական ճառի, հայ իշխանաւորներին եւ հայ ժողովրդին ուղղուած կոչի նման գրարեր ներբողում ընդհանրապէս չկան: Եւ յեկող Ներբողը ձօնուած է Վաղարշապատի Կաթողիկէին, եւ ոչ Վաղարշապատին:

* * *

Այս Ներբողի հեղինակային պատկանելութեան հարցը քննելիս ցանկանում ենք շեշտել մի կարեւոր հանգամանք. նրանում ի յայտ է գալիս հեղինակի ստեղծաբանութեան խոր շերտերից մէկը, որ կապուած է նրա խորհրդազգած (միստիկ) աշխարհընկալման հետ: Դա բառաստեղծման, նորաբանութիւնների ու նորակազմութիւնների շերտն է, յարաշարժ, փոխներթափանցող մի աշխարհ, որը խօսքի մի նոր, իւրօրինակ ոլորտ է ձեւաւորում՝ բացայայտելով, առաջին հերթին, հեղինակի բանաստեղծական-ճարտասանական բացառիկ հմտութիւնները:

Համեմատութիւնը, բնագրային ներքին աղերսների վերհանումը որոշակիացնում է Գրիգոր Նարեկացու բառագանձի ու լեզուական-բառաստեղծական ներքին ընթացքի վրայ այս Ներբողի ակնյայտ ազդեցութիւնը:

Բառաստեղծման գարերքը, իբրեւ ուսուցչի եւ աշակերտի ստեղծաբանութեան կարեւորագոյն բաղադրիչներից մէկը, ուղղակիօրէն սերում է մարդկային ստեղծագործութեան մէջ անհատական սկզբի բացարձակացման, «խօսքի զօրութեան արուեստի»՝ իբրեւ անմիջնորդ ասպածաբանութեան եւ ասպուածահաղորդութեան նրանց դաւանած սկզբունքներից: Նրանց համար բառերը հոգեկիր, հոգեզգայուն միջոցներ, «պատճառներ» են՝ ներշնչանքի, յուզազեղութեան, հոգեւոր գարփանքի հասնելու համար: Այս ընկալումները եւ դրանց բացարձակացումը յաղթահարում էին հոգեւոր երգերի աւանդական բառային եւ շարահիւսական կաղապարները, բառ-հասկացութիւնն ազատում էին պատենաւորումից՝ նոր ոլորտներ բացելով ստեղծագործական ազատութեան եւ անսանձ երեւակայութեան համար:

Բառերը նրանց ստեղծագործութեան ծիրում ընկալում էին իբրեւ էութիւններ, որոնք գանում էին բանաստեղծին երկնային աստիճանակարգութիւններով: Եւ այս «լուսերգութեան», բառաստեղծման, նորաբանութիւնների անվերջ արարման այս գարերքն ի յայտ է գալիս յատկապէս ներբողական ժանրում[10]: Սրանք այս դպրոցի եւ նրա ներկայացուցիչների ինքնօրինակ ոճի իւրայատկութիւններն են, որոնցով նրանք ընդգծում եւ առանձնանում են միջնադարեան գրականութեան պատմութեան մէջ:

Ասուածի լաւագոյն ապացոյցներից է նաեւ Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոց» երկի ներբողանման հատուածը, որին ուղղակիօրէն յարում է նշուած Ներբողը: Բանն այն է, որ այն նոյնպէս ուղղուած է կաթողիկէ եկեղեցուն եւ նոյնութիւններ ու համընկնումներ ունի Ներբողի հետ եւ՛ մեկնութեան արուեստի սկզբունքների ու դրանց կիրառման, եւ՛ գիտական եզրաբանութեան, եւ՛ ոճի ու բառամթերքի, եւ՛ բառաստեղծման ոլորտներում, որոնք աներկբայ են դարձնում դրանց հեղինակային նոյնութիւնը: Որոշ ակնյայտ առնչութիւններ այս երկերի միջեւ նկատել է նաեւ Յ. Քէոսէեանը, սակայն ճիշտ եզրահանգում անելու համար, մեր կարծիքով, նրան խանգարել է իր կանխակալ կարծիքը:

---

10 Այս մասին տե՛ս **Հ. Հ. Թամրազեան**, Գրիգոր Նարեկացին եւ նորպլատոնականութիւնը, Եր., 2004, էջ 318-365:

Այսպէս, նա գրում է. «Որ այս գործն իրապէս հակաաղանդաւորական բովանդակութիւն ու նպատակ ունի, հաւաստում է նաեւ Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոց» ջատագովական երկի հետ նրա ունեցած որոշակի աղերսներով... Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոց» հակաճառութեան պահպանուած հատուածից երեւում է, որ նա հերքում է թոնդրակեցիների այն դաւանութիւնը, ըստ որի եկեղեցին մերժում է իբրեւ նիւթական կառոյց: Նման հարցերի է նուիրուած նաեւ Անանիա Սանահնեցու Ներբողը: Իբրեւ այս կարգի հարցերով ապրող հեղինակ, ծանօթ լինելով Անանիա Նարեկացու Հաւատարմատին՝ Սանահնեցին ամենայն հաւանականութեամբ օգտուել է «Ընդդէմ թոնդրակեցւոց»-ից: Այսպէս, օրինակ.

| Անանիա Նարեկացի | Անանիա Սանահնեցի |
|---|---|
| *«Ի հարցմունս բանի մասանցն միապէս ապորոգին ի սերսն եւ ի տեսակս, ի ձեւս եւ ի թիւս,* եւ հոլովսն եւ յենթանկեալ անուանցն տեսակս...»: «Ընդդէմ թոնդրակեցւոց» | *«Որ զանազանեալ տարբերի հինգ եղանակօք ըստ* հոլովմանց անուան բանի, *որ ներդարեալ քերդածինդ* ենթանկեալ տեսակացն...»: |

Այս համեմատութիւնը ցոյց է տալիս, որ Անանիա Նարեկացու երկի ազդեցութիւնը որոշակի է, նոյն միտքն է՝ փոքր-ինչ փոխուած, եւ բառացի նմանութիւնն էլ ակնյայտ»[11] (վերջին ընդգծումը մերն է – Հ. Թ.):

Այստեղ շեշտենք, որ սա «բառացի ակնյայտ նմանութեան» միակ դէպքը չէ. դրանք բազում են ոչ միայն Անանիա Նարեկացու այս, այլեւ այլ երկերի հետ: Բառացի համընկնումներ եւ ակնյայտ նմանութիւններ կան նաեւ այդ երկերի եւ Գրիգոր Նարեկացու երկերի միջեւ, հանգամանք, որ պարտադրում է նման օրինակները համադրել Նարեկեան դպրոցի ընդհանուր յենքի, տեսական համակարգի՝ իբրեւ համաբնագրի հետ, որը չի արել ուսումնասիրողը:

Գրիգոր Նարեկացու գրական ժառանգութեան ուսումնասիրողներից Հ. Միրզոյեանն իր «Նարեկացու բառաշխարհը» ուշագրաւ ուսումնասիրութեան մէջ[12], յենուելով «Նոր Հայկազեան բառարանի» հեղինակների տեսակէտի վրայ, այս երկը բնականօրէն դիտարկում է Անանիա Նարեկացու երկերի շարքում, վեր հանելով բառարանից բոլոր այն բառերը, որոնք հանդիպում են միայն Անանիա Նարեկացու եւ ապա Անանիա Նարեկացու եւ Գրիգոր Նարեկացու ստեղծագործութիւններում: Արդիւնքներն, իրօք, անսպասելի են. Անանիա Նարեկացու այս Ներբողում օգտագործուած 177 նորաբանութիւններ վկայուած են միայն Անանիա Նարեկացու, 17-ը՝ միայն Անանիա եւ Գրիգոր Նարեկացիների մօտ[13]: Ըստ էութեան, բոլոր այդ բառերը բառ-բանաստեղծութիւններ, բառ-խտացումներ են, որ բոլորովին նոր շարժման մէջ են դնում հոգեւոր բանաստեղծութեան խորհրդանիշերի աշխարհը, լեզուին հաղորդելով միանգամայն նոր շարժունակութիւն եւ ճկունութիւն՝ օժտելով այն գուներանգների աշխարհով, լուսեղէն բիւմների փպաւորչականութեամբ: Լեզուաստեղծման այս տա-

11 **Յ. Քէոսէեան**, Անանիա Սանահնեցի, էջ 20-21:
12 **Հ. Միրզոյեան**, Գրիգոր Նարեկացու բանաստեղծական աշխարհը, էջ 7-55:
13 Անդ, էջ 52-55:

ները, ստեղծագործական անսանձ երեւակայութեան պաշտամունքը, ստեղծագործական ազատութեան, անհատական սկզբի բացարձակացման սկզբունքները, ինչպէս նշել ենք, ներյատուկ են Նարեկեան դպրոցին եւ ընդգծուած են նրա երեւելի ներկայացուցիչների՝ Խոսրով Անձեւացու, Անանիա եւ Գրիգոր Նարեկացիների երկերում, յատկապէս վերջիններիս ներբողական ժանրի գործերում:

Այս ամենը նկատի ունենալով՝ «Նոր Հայկազեան բառարանի» հեղինակները գործն աներկբայօրէն վերագրել են Անանիա Նարեկացուն՝ շեշտելով նրա ոճի իւրայատկութիւններն ու բառաստեղծման տարերքը. «Անանիայի վարդապետի Նարեկացւոյ՝ հօրեղբօր մօր սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, Ճառ ի վերայ եկեղեցւոյ՝ պերճ եւ փառացի ոճով, հանդերձ անսովոր բարդութեամբ բառից...» (տե՛ս անդ, էջ 9):

Այստեղ նշենք, որ Հայկազեան բառարանի հեղինակները, բնականաբար, բառարանի մէջ ամբողջութեամբ չեն ներառել Ներբողի բառամթերքը, որի մէջ զգալի տեղ են գրաւում նորաբանութիւններն ու նորակազմութիւնները:

Պարզ է ինքնին, որ բառարանի ներհմուտ եւ խորագէտ հեղինակները, որեւէ մի երկի հեղինակին որոշելիս, առաջին հերթին յենուել են լեզուաոճական տուեալների վրայ: Սա առանձնայատուկ նշանակութիւն ունի՝ նկատի ունենալով միջնադարեան մատենագրութեան այն աննախադէպ համընդգրկուն ոլորտը, որը նրանք իրենց հետազօտութեան մէջ են ներառել եւ որի խորքում է համադրում, ընդգծում եւ որոշարկում իւրաքանչիւր լեզուական իրողութիւն:

Կոնկրետ Ներբողն Անանիա Նարեկացուն վերագրելիս, բնականաբար, ի թիւս այլ փաստերի, նման եզրահանգման պատճառ է հանդիսացել դրա լեզուաոճական հարազատութիւնը Անանիա Նարեկացու եւ Գրիգոր Նարեկացու ստեղծագործութեան ամբողջական համատեքստի հետ:

Այստեղ հարկ է շեշտել, որ բառարանում ներառուած չեն Անանիա Նարեկացու միւս երկերը, որոնցում եւս, յատկապէս մեկնողական-դաւանաբանական երկերում, կան նորակազմութիւններ: Մասնաւորապէս, «Սակս բացայայտութեան թուոց» երկում հանդիպում են մի քանի բառեր, որոնք վկայուած չեն Հայկազեան բառարանում: Դրանք են՝ լիաբողբոջ, ակահեղձ, դեղնամակերեւոյթեան, կուրաշաւիղ, մշտնջենակուսի:

* * *

Բառաստեղծման բարդ ու յարաշարժ ենթաշերտին Անանիա Նարեկացու երկերում զուգակցւում է նրա իմաստասիրական բառաշերտը, որը գերակայում է «Ընդդէմ թոնդրակեցւոց», «Հաւատարմատ» եւ «Սակս բացայայտութեան թուոց» երկերում, իւրօրինակ ձեւով ներհիւսուելով նաեւ այս Ներբողին:

Նրա ուրոյն ոճի բաղկացուցիչներն են յունաբան դպրոցի ազդեցութեամբ ստեղծուած փիլիսոփայական-տրամաբանական-քերականական եզրաբանութիւնն ու բառ-հասկացութիւնները, որ նրա փիլիսոփայական-մեկնողական երկերի հիմնաշերտն են կազմում: Համեմատութեան համար մէջ բերենք այդ բառաշերտերը նրա տարբեր երկերից:

| «Ընդդէմ թոնդ-րակեցւոց» | «Հաւատարմատ» | «Մակս թուոց» | «Ներբող» |
|---|---|---|---|
| հոմանուն | անուն | շարայարել | ներտաղական |
| հոմանունաբար | արտասահմանեալ | շարադրութիւն | մակաբայ |
| ստորոգութիւն | բացորոշեալ | վերտառութիւն | առասացութիւն |
| շաղկապութիւն | բացափայլեալ | փոխադրութիւն | արտալածեալ |
| յարանուն | բաղհիւսական | բացակայարել | հոլովումն |
| փաղանուն | տարալուծական | շարաբերել | անուն |
| ներագիծ | շաղկապ | տարորոշ | նեթանկեալ |
| սեռ | համաբանել | սահման (սահմա-նում) | տեսակ |
| տեսակ | համացոյական | արտարտութիւն | շարադրական |
| թիւ | հոմաբնութիւն | նախագիծ | գերադրական |
| ձեւ | յարանուն | շարամանութիւն | եզական |
| հոլով | յարանունաբար | յարաբարդել | բագձածական |
| հասարակ | մակամրածութիւն | շարաթուել | որակութիւն, |
| անհար | մականունութիւն | յարացոյց | որականալ |
| հասարակաբար | շարադրութիւն | տարացոյց | քանակութիւն |
| յատկաբար | շարաթուել | շարաշարժութիւն | բացաբառնումն |
| յոգնաբար | շարայարել | յարադրութիւն | հանգիտահաս-սար |
| եզական | շարայծել | արտամերժել | շարայարել |
| | շարահիւսել | արտալածել | արտորոշե |
| | շարառութիւն | շարայծել | շաղաշարումն |
| | շարագրել | տարամերժել | տարրական |
| | շարախառնել | տրամադրել | ներմարդութիւն |
| | որակութիւն | պարածածկել | տարացոյց |
| | տարորոշեալ | բացամերժել | անքակ |
| | սահման | | անորիշ |
| | սեռ | | բարառնութիւն |
| | տեսակ | | պարագրայէն |
| | փոխարրութիւն | | պարածածկել |
| | փոխաձեւութիւն փաղառութիւն | | բաղդարրութիւն անպարիմանալի |
| | | | շարապնդեալ |

* * *

Այս Ներբողն Անանիա Նարեկացուն վերագրելու համար, ինչպէս նշեցինք, հիմք են հանդիսացել առաջին հերթին նրա լեզուաոճական հարազատութիւնը, բնագրային ակնյայտ կապը, փոխանցումներն ու համընկնումները Անանիա Նարեկացու եւ Նարեկեան դպրոցի միւս ներկայացուցիչների, առաւելապէս Գրիգոր Նարեկացու երկերի հետ: Այդ առումով յատկանշական է Ներբողում առկայ մի առանցքային պատկերի՝ Քրիստոսի սրբազան արեան գեղարուեստական-ճարտասանական ոճաւորումների շարքը, որի հիմքում Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոց» երկի նմանատիպ փոխաբերական պատկերն է: Այս պատկերն անընդհատ խաղարկւում է Ներբողում: Մէջ բերենք բնորոշ օրինակներ.

«Եւ թաղումն, զոր առ ի հրախառն ջուր սուրբ աւազանին առկոչէ զլուացումն, որ նոյն ինքն յորջորդի արգանդ հոգեւոր եւ հոգեծին մաւրս մերոյ Սիոնի սուրբ եւ կաթողիկէ առաքելական եկեղեցւոյ: Ըստ այսմ աստուածայինն ծնանդեան եւ ի ճաշակումն սնանդեան պատշաճեալ պատրաստի փղայացեալն ծնանդոց հոսումն վտակաբուղխ կենսակայլակ կողահոս սուրբ եւ անապական արիւնն Քրիստոսի՝ ի սմա միշտ պատարագելոյ ուղղափառ հաւատով:

Այս են հրաշք զարմանալիք ի վեր քան զմիտս իմացականաց բանականաց սեռից իմանալեաց՝ մահուամբ սիրոյ ծնանել մանկունս անմեղս եւ արիւնաթոր ստեամբք սնուցեալ առ ի զարգացումն հոգեւնոյց աճմանց, որ ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ»:

«Այլ կենսատու զաւրութեամբ սուրբ աւազանին... յորմէ բղխեալ հոսէ կենսայայլակ վտակն տիեզերածաւալ եւ աշխարհակեցոյց նոր եւ չնաշխարհիկ նորոգչին տիեզերաց...»:

«Եւ հրախառն կայլակաւք կողահոս հիւթից յորդասահ վտակաց ամենակեցոյց բոլորիցն Արարչի, որ ոչ պակուցեալ կիզու եւ առ ի հրդեհումն տոչորման, այլ կանաչազարդ ոռոգմամբ դալարեցեալ, ծաղկեցուցանէ զհովիտս շուշանափայլս յարկի մաւրս մերոյ մեծի սուրբ եկեղեցւոյ»:

«Խումբս մարգարէից եւ աստուածախօս արանց ... ի Սուրբ Հոգւոյն շնորհացն հիւթից կաթեցուցանելով հանապազացաւղ ծորմամբ եւ զանձրեւս հոգեբուխս աստուածաձիր եւ քրիստոսազարդ վարդապետութեան ... ցաւղեն զարտոսրաթոր զվտակս մարգարտերանգս կաթուածոց»:

«Սակս որ ի սմա մշտամատոյց եւ հանապազաբուղխ ծորման իջիցն կողահոս կաթուածոց եւ կենդանի կայլակման կենեղուտ եւ կենսացուցիչն վտակաց կենդանարար արեանն կենարարին եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի»:

Համեմատութեամբ ընդգծում եւ պարզորոշ է դառնում բոլոր այս հատուածների կապը Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոց» գործի պահպանուած մասի հետ. մենք գործ ունենք նոյն բնագրային յենքի տարբերակների հետ եւ լեզուաոճական նոյնութիւնն առաւել քան ակնյայտ է: Դրանք բոլորը սերում են Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոց» գործի մի փոխաբերական պատկերից, որում կաթողիկէ եկեղեցին համեմատւում է նոյնանուն երակի հետ, որ բժշկական եզրաբառ է եւ սերում է Գաղիանոսի աշխատութիւններից[14]: Ահա այդ պատկերի ծաւալումն ու ճարտասանական ճիւղաւորուած ոճաւորումներն իրար են հիւսում նոյն հեղինակի այս երկու ներբողները, քանի որ հակաճառութեան պահպանուած

14 Այս մասին տե՛ս **Հ. Հ. Թամրազեան**, Անանիա Նարեկացի, էջ 67-72:

մասը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ներբող Կաթողիկէ եկեղեցուն, որի նշանակութիւնը մերժում էին թոնդրակեցիները: Ահա նշուած հատուածը.

«Ունի դարձեալ կաթուղիկէ անունդ եւ այլ տեսակ զաւրութեան, զոր եւ արուեստագէտք բժշկաց զնոյն անուն հոմանունաբար առեալ կոչեն ի վերայ միոյ երակի եւ մայր եւ գլուխ ամենայն բոլոր երակացն զնա գոլ սահմանեն, քանզի որ ի նմանէ, ասեն, արեանն կաթուածք, գրեթէ փոխանակ ընդ ամենայն երակացն խաղացման բնութեան բաշխեալ տա[յ] զառողջութիւն բովանդակ մարմնոյն, զի որպէս նա նոյն անուամբ գլուխ եւ մայր ամենայն առողջութեան լեալ եւ կոչեցեալ, եւ տուիչ կենդանութեան բովանդակ անդամոց մարմնոյն ... Այսպիսի բառիւ բացատրեալ յայտնելով զբանին զաւրութիւն՝ կաթան եւ կաթիկ, եւ կայլակ, որ բազմամասնաբար տեսութեամբ ըստ բաշխման երակացն, որ ի մարմնին բաղկացեալ եւ ընդ միով նաւաճեալ գերաբնիւն կաթողիկէիւ, յորմէ եւ առողջութեան հանդիպի նոցա բաշխումն»[15]:

Ահա այս պատկերն է, որի հիմքում բժշկագիտական տուեալն է, հետագայ հատուածներում, ինչպէս նաեւ հեղինակի այլ գործերում փոխաբերութիւնների ու ճարտասանական ոճաւորումների շարժառիթ հանդիսացել:

Դրա վառ արտայայտութիւններից է բնագրի յաջորդ հատուածը. «Որք առ սա ժողովեալ յայս կաթողիկէս... եւ ընդ սմա միացեալ հոգիայարդար շաղկապութեամբ... յորում եւ շտեմարանեալ կան ամենայն գանձք հոգեւոր պարգեւաց գիտութեան եւ իմաստութեան Տեառն: Այլ եւ ցուցական երեւութիւ խաղան ի սմա երակ բաշխից Սուրբ Հոգոյն շնորհաց՝ վասն առ ի յերկնից կաթելոյն ի սա աստուածային անճառելի ճառագայթիցն շող եւ նշոյլք իմանալի ծագման արեգականն արդարութեան:

Այսպիսի տեսակաւ գերակայեալ կայ իւրական ի փառսն՝ ունելով յինքեան զկաթանն մշտնջենաբուխ հոգեսնունդ կաթինն յերկաբոյս ստեանցն կառուցմանց, այս է՝ ի Հին եւ ի Նոր Կտակարանաց... Եւ եռավտակ յորձանք հոսանաց Հոգոյն եւ ի սմա աղբերացեալ, այսինքն՝ առաքելական եւ մարգարէական եւ վարդապետական մասին շնորհացն տեսակք... Նա եւ ոչ միայն իբր ի դուլէ ինչ ցայտեալ կաթիլ, այլ լցեալ եւ ծովացեալ ի սմա բազում մասունք շնորհաց Հոգոյն՝ մաքրութիւն... յորմէ իբր ընդ ցնցուղ ինչ հոգեւոր երակաց կայլակք արեանն արձակեալ, տուիչ կենդանութեան անդամոց մարմնո[յ] եկեղեցո[յ]»:

Այժմ ներբերենք համանման հատուածներ նոյն հեղինակի «Սակս բացայայտութեան թուոց» երկից:

«Զի ակահեղց ունի զգոյն դեղնութեան, զի որ ի վարժս կրթութեան երկասիրաբար դեգերին դեղնամակերեւոյթեան տեսակն ճնշելով զմարմին խոնարհութեան, արտամերժելով զբազմահոյլ տեսակ փշաբեր ախտիցն եւ ճնշելով զսրինս մտացն, թերեւս լիցի բղխիչ կաթին եւ մեղու ի ճաշակումն սկսելոց եւ կատարելոց՝ հայելով ի բնական երկիրն, զի պարարտ է բնութեամբ եւ բազմաբեղուն ունի հովիտս եւ զընդարձակ դաշտս մտաց...:

Զի եւ ի նոյն իսկ ճշմարիտ Բանէն եւ ի կենդանի աղբերէն բղխեալ չորս առաջս յԵդեմական դրախտէն եկեղեցւոյ ի չորեքծագեան ոլորտս աշխարհի ոռոգանել զդէմս մտաց բանաւոր երկրի: Զի նա իսկ է ճշմարիտ աղբիւր կենաց՝ բղխեալ ի Հաւրէ, որ աղբիւրացուցանէ զմերձեցեալսն...»:

Բոլոր այս համեմատութիւնները ցոյց են տալիս, որ մենք գործ ունենք միեւնոյն հեղինա-

15 «Արարատ», 1914, էջ 922-923:

կի երկերի հետ, որի անկրկնելի ու իւրատիպ ոճն անհնար է շփոթել այլ հեղինակի հետ: Նրա երկերում ներթափանցուած են գիտական եզրաբանութիւնն ու գեղարուեստական նրբագեղութիւնը, բարձրարուեստ ու շքեղաշուք ոճը, որին յատուկ է բառաստեղծման տարերքը: Այս յենքը, այս բազմաշերտ ներհիւսուածքն, ահա, բոլոր այս երկերը կապում է իրար, տանելով յաճախ բնագրային փոխներթափանցումների, համընկնումների ու ճիւղաւորումների:

Այս պատկերներն ու ոճաւորումները ուսուցչից անցել են նաեւ աշակերտին՝ Գրիգոր Նարեկացուն, որի ներբողների վրայ հսկայական է այս երկի թողած ազդեցութիւնը: Ահա մի հատուած Յակոբ Մծբնեցուն նուիրուած նրա ներբողից.

«Եւ թէ պարտ է զտարացոյց փոքուն առ մեծին աւրինակ դասել, որպէս սքանչանի թիւրակէ ի խածանող մահացու սողնոց առ կենացս նիւթ պատրաստեալ, յորոց որք զբժշկայինն ի միշտ համբուրեն կրթականութիւն. ի թորմանէ բոսորակայլակ կաթուածոց քառոտանեաց անմաքրից՝ ներկուածք կայսերական հանդերձից...»[16]:

Իսկ ահա մի բնորոշ օրինակ Գրիգոր Նարեկացու «Քարոզ ասացեալ ի սուրբ Լուսաւորիչն Գրիգոր» գանձից.

Ուր կրկինս արբեր զկաթինս ի սփեանցն ելեալ Սիոնի,
Յարբումն մանկանց զՆոր եւ զՀին Կտակարանս հոգեբուղխ...
Բաշխող շնորհաց Հոգւոյն Սրբոյ մանկանց բոլորից...
Կաթամբ մայրաբար դիեցուցեր զերկամբք քո ծնեալ զզաւակս անհամարս...[17]:

Կաթուած բառը «Մատեանում» հանդիպում է 12 անգամ: Առաւել համապատասխան եւ հարազատ է Ներբողին «Մատեանի» հետեւեալ բառակապակցութիւնը.

Արեամբ քո սրսկեա՛ զշրջարկութիւնս կայիցս,
Զհետս ելամտիցն կաթուածով կենարար կողիդ գծագրեա ... (ՂԱ, Բ)

Առաւել յատկանշական են կայլակ բառի օգտագործման դէպքերը, որոնք ուղղակիօրէն աղերսւում են ներբողի նմանատիպ հատուածների հետ.

Եւ կայլակ կողիդ զարիւն խաղողոյ ... (ՂԳ, Ժ)
Զոր կողից քոց կայլակք նորոգեցին ... (ՀԸ, Բ)
Զվճիռ հոգւոյս մահու ջրեսցես կայլակօք արեան Որդւոյդ սիրելւոյ ... (ՀԸ, Ա)

Յատկանշական է նաեւ Գրիգոր Նարեկացու «Ճառ լուսոյ Խաչի» ներբողում կիրառուած օրինակը.

«Զրոյն կենդանոյ նորագործն Աւազանի մաքրարա՛նդ նիւթ, նշա՛ն երկրպագեալ, վասն զի իբր ի կենդանական խմոր արդեան զանգուածոյ, զծորումն իջման համայնաբուղխ աղբերացն՝ տեանց մաւր երկրի, յընկղմական խորութեանց մեղաց կարմրազարդ արիւնակայլակ այլայլմամբ ի խառնութենէ միութեան արեան Կենարարին ի նոր փոփոխութիւն ծածկութիւն զգեստու լուսոյ պարզապէս»[18]:

---

16 «Մատենագիրք Հայոց», ԺԲ հատոր, Գրիգոր Նարեկացի, Անթիլիաս, 2008, էջ 1000:
17 Անդ, էջ 685, 687:
18 Անդ, էջ 938:

* * *

Ներբողը, ինչպէս նշել ենք, Անանիա Նարեկացու «Ընդդէմ թոնդրակեցւոց» գործից բացի, բնագրային աղերսներ ու համընկնումներ ունի նաեւ նրա «Հաւատարմատ» եւ «Սակս բացայայտութեան թուոց» երկերի հետ: Մասնաւորապէս, «Հաւատարմատ» դաւանաբանական երկում հեղինակը Քրիստոսի միեղէն բնութեան հիմնադրոյթն ապացուցելու համար, յաճախ կիրառում է մարդու բնութեան՝ իբրեւ տարբեր շերտերի՝ մարմնի, հոգու եւ բանականութեան բաղկացութեան օրինակը, որ հանդիպում է նաեւ յիշեալ Ներբողում: Մէջ բերենք օրինակներ Անանիա Նարեկացու «Հաւատարմատից» եւ Ներբողից:

«Զի թէ բոլոր մարդկութիւնք, որ տարբերին ի միմեանց, բազում ինչ զանազան որակաւք եւ ունակութեամբ՝ սակայն ի միում անհատի բոլորն տեսանի՝ մարդկութեան տեսակ, որչափ եւս առաւել յԵրրորդական միութեանն, որ ոչ իւիք զանազանին ի միմեանց»[19]:

Մարդկային բնութեան՝ իբրեւ տարբեր սեռերի ու տեսակների բաղկացութեան վերաբերեալ այս միտքն աւելի ամբողջական է ներկայացուած «Հաւատարմատի» «Յաղագս երից սրբասացութեանց» գլխում եւ Ներբողում:

«Եւ զոր աւրինակ մարդն հոգւով միացեալ եւ մարմնով եւ մտաւք մի մարդ կոչի եւ մի դէմ, եւ մի անձն, եւ մի գոյացութիւն, եւ մի բնութիւն, եւ մի անուն իւր կոչի՝ ոմն մարդ, թէպէտ եւ ի բազում խառնուածոց եւ յայլ եւ յայլ տեսակաց եւ յաննման սեռից ունի գոյացութիւն իւր, սակայն մի մարդ կոչի եւ մի անուն... թէպէտ եւ գիտեմք, եթէ անմահ է հոգին եւ անչարչարելի, եւ միտքն չանկանի ընդ ըմբռնմամբ եւ ընդ շաւշափմամբ, սակայն զհոգեկանսն եւ զմարմնականսն միոյ մարդոյ եւ միոյ անուան համարիմք:

Ըստ այսմ աւրինակի համարեսցուք եւ զՔրիստոս՝ Աստուած ճշմարիտ եւ Որդի Աստուծոյ, թէպէտ եւ յոքնանուն անուանի, այլ ըստ գործոյն կոչի, որպէս դուռն եւ այլն: Բայց տիրական անուն մի կոչի»[20]:

Այս հատուածում հեղինակն օգտագործել է ըստ գործողութեան անունն ստուգաբանելու սկզբունքը, որն այս հատուածում ձեռք է բերել տրամաբանական եզրաբառի իմաստ: Այսպիսի օրինակներ կան նաեւ հեղինակի այլ գործերում, ինչպէս նաեւ Ներբողում:

Այժմ ներբերենք Ներբողի համանման հատուածը. «Զի թէպէտ եւ գոյութեամբ առ բաղկացութիւն բնութեանս մերոյ կատարելանայ այս աստուածահրաշ սիրոյ եռացումն, որ հրաշալի խառնմամբ եւ անճառ խառնուածով ի վեր քան զմիտս եւ զիմացումն իմացականաց՝ միաւորեալ միացոյց Աստուածն Բան զպարզութիւն աստուածային բնութեան իւրոյ ընդ յաւդականութիւն տարրական բնութեանս մերոյ, եւ մի բնութիւն ըստ տնաւրինական ներմարդութեան աստուածային անձնաւորութեամբ երեւեցոյց աշխարհի:

Վասն զի ինքն Էնն Աստուած մարմնազդեցիկ խառնմամբ, անշփոթ եւ անհեղլի մարմնաւորութեամբ եկն երեւեցաւ աշխարհի ըստ տարացուցի մարդկային բնութեանս, որ ի հոգւոյ եւ ի մարմնոյ գոյացեալ մի բնութիւն ճանաչի: Ըստ այս իմացեալ տեսցի եւ աստուածային անճառ մարմնաւորութեան երեւումն, որ անքակ եւ անորիշ միաւորութեամբ զընտանութիւն

19 ՄՄ, ձեռ. թ. 6453, թերթ 3ա:

20 ՄՄ, ձեռ. թ. 6453, թերթ 80բ:

անհաս եւ անհուն սիրոյն իւրոյ ներգործեալ կատարեաց ի մեզ ապտուածապէս, հարսն սիրելի եւ գեղեցկապիպ պճնապաճոյճ զգեստիւ զարդարեալ զբնութիւնս մեր անուանելով»:

Յատկանշական է նաեւ Վարդան Այգեկցու կազմած «Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ» ժողովածուում Անանիա Նարեկացուց քաղուած համանման հատուածներից մէկը, ուր Քրիստոսի բնութիւնը խորհրդանշող պատկերաւոր օրինակները (հուր-երկաթ, լոյս-օդ, հոգի-մարմին), հանդիպում են նաեւ Անանիա Նարեկացու այլ երկերում:

«Եւ խառնումն որպէս հուր ընդ ոսկի եւ ընդ երկաթոյ, որ ոչ յեղաշրջէ զնիւթոյն բնութիւն, այլ յիւրն փոխարկեսցէ բնութիւն եւ հաւասարէ իւրում լուսոյն, եւ կամ որպէս պարզութիւն լուսոյ ընդ աւդ խառնեալ, եւ կամ որպէս հոգի եւ մարմին, զի միաւորեալ են անշփոթ, եւ մի կոչի բնութիւն մարդոյս, այսպէս եւ Բանն Աստուած միաւորեալ ի վերքան զմիտս եւ անշփոթ մնացեալ»[21]:

Ինչպէս տեսնում ենք, այս հատուածների ներքին կապն ակնյայտ է:

Ներբողի մէջ տեղ է գտել թուային միստիկային վերաբերող մի հատուած, որի աղբիւրը, մեր կարծիքով, Անանիա Նարեկացու «Սակս բացայայտութեան թուոց» երկն է՝ այդ խնդրին վերաբերող եզակի մի սկզբնաղբիւր հայ մատենագրութեան մէջ:

| *«Սակս թուոց»* | *Ներբող* |
|---|---|
| *Իսկ սքանչելի թիւ* Է-երորդիդ *յոգնաթիւ ունի խորհուրդ զանազանեալ* անխառն պարորոշ թիւ, *սեռն եւ անապակ բնութիւն, զի ոչ բնակի զոք, եւ ոչ ծնանի յումեքէ ի ներքոյ Ժ-ինդ,* զոր կոչեն մշտնջենակուսի *եւ անմաւր, միակի ի բնութիւն, զոր ասեն ծնեալ յուղղոյն Արամազդայ:* | *Առ սմին զուգաթուեացի եւ Աթենաս իւրով* անլծորդ եօթնեկիւն, *որ եւ սա* կոյս կոչիւր *ըստ հեթանոսական առասպելական բաղաջանաց:* |

* * *

Շարունակենք մեր համեմատական վերլուծութիւնը:

Այս Ներբողը, ինչպէս Գրիգոր Նարեկացուն պատկանող «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն ասացեալ» երկն ու «Մատեանի» որոշ գլուխներ[22], ընթերցուել է եկեղեցում՝ հանդիսարանի առջեւ:

Այդ է վկայում հեղինակի ներբող-հանդիսախօսութեան հետեւեալ հատուածը.

«Արդ, յաղագս այսքան գերագոյն եւ անճառ պարգեւաբաշխութեանցն մեզ առթուին, որ ի ձեռն սուրբ եւ կաթողիկէ եկեղեցւոյ, ա՛ւն առեալ առ նոյն ինքն ապաւինելով, իբր ձեռամբ ապտուածայնով աւժանդակեալ, անցցուք ի հանդիսի բարառնութեան բանիւ, իբր ընդ կենդանւոյ՝ ընդ սրբոյ մաւրս մեր խաւսելով՝ ընդ առաքելական եւ ընդ կաթողիկէ սուրբ եկեղեցւոյ»:

---

21 **Վարդան Այգեկցի**, Գիրք հաստատութեան եւ Արմատ հաւատոյ, աշխատ. Տ. Շահէ քհն. Հայրապետեանի, ներած. Յակոբ Քէոսէեանի, էջ 131:

22 Այս մասին տե՛ս **Հ. Հ. Թամրազեան**, «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ», Երեւան, 2009:

Նախաբանից յետոյ հեղինակը պարզաբանում է ներբողի կառուցման իր յստակ սկզբունքը՝ նա այն կառուցում է «բարառնութեան բանիւ», որ նշանակում է ներբողուող երեւոյթի, առարկայի (տուեալ դէպքում՝ կաթողիկէ եկեղեցու) հետ խօսելն՝ իբրեւ կենդանի էակի: Այս հնարքը, որն օգտագործուել է միջնադարեան բանաստեղծութեան մէջ, առաւելապէս ներբողի եւ ողբի ժանրերում, յաճախակի է հանդիպում Կիլիկիայի գրական դպրոցում: Այս եզրաբառը նաեւ այլաբանութեան, նմանաբանութեան իմաստ ունի եւ այդ նշանակութեամբ օգտագործուած է Գրիգոր Նարեկացու երկերում: Սրա հետ նոյնանում է դիմառնութիւն եզրը, այն տարբերութեամբ, որ անշունչ իրից, երեւոյթից եւ առարկայից բացի այն կարող է վերաբերել կենդանի էութիւններին եւ մարդկանց, որոնց հետ բանաստեղծը խօսում է, որոնց դիմում է՝ իբրեւ կենդանի ներկայութեան՝ դէմ առ դէմ՝ դիմառնաբար: Ոճական այս հնարքը միտուած էր աւելի անմիջական ու յուզական դարձնելու բանաստեղծական քերթուածը:

Դիմառութիւնը նաեւ փոխաբերութիւն է նշանակում: Այս իմաստով է այն օգտագործուած Գրիգոր Նարեկացու «Մատեանի» ՂԳ՝ Մեռոնին նուիրուած գլխում:

«Մառնամուտ, որ եւ այս միւռոն... որ եւ սոյն կոչումն դիմառութեան չէ աւտարացեղ...» (ՂԳ, ԺԹ):

Բարառնութիւն բառի խորհրդանշական կիրառութեան ենք հանդիպում նաեւ «Մատեանի» ՂԲ՝ Կոչնակին նուիրուած գլխում («Ի փայտն երջանիկ բարեբաստութեան ժամահարին խորհրդածութեան...»):

Կոչնակը եկեղեցական ժամերգութեան կարեւոր բաղկացուցիչներից ու խորհրդանիշերից է, ուստի Գրիգոր Նարեկացու մաղթանք-ներբողն այստեղ, բնականաբար, վերաբերում է նաեւ ողջ եկեղեցուն՝ «Նոր Սիոնին», որի սպասքներից մէկն է այն՝ «Մի սա սպասուցն կազմուածոց արարչաւանդից գլխաւորաց...»:

Պարփակարան անխորտակելի Նորոյս Սիոնի,
Մի սա ի սպասուցն կազմուածոց արարչաւանդիցն գլխաւորաց,
Զոր եկեղեցականքս քրիստոնէից ընդ ղեւտականացն
զգուշաւորապէս բարձեալ յանձանձեն,
Աւրինակ ձայնի հրեշտակին...
Նոր գործի շնորհի նուագարանաց Աւետարանին՝
Զարթուցիչ Հոգւոյն առ մեզ....
Սկզբնապար նախընթացութեան աղեյարմար ջութակաց՝
Բարեպաւիղ ողբերգարկութեանց,
Բարացուցական բամբռան բառացի բարառնութեանց,
Սրինգ նորոգ այլ իմն տեսակաւ՝
Առեալ մեզ ընդ հնոյն փոխանորդութեամբ...
(ՂԲ, Ը)

Բառեզրի նման կիրառութեան բնորոշ օրինակ է հանդիպում նաեւ Գրիգոր Նարեկացու «Ներբող ի Սուրբ Խաչն» երկում:

Ահա այսքանեաւք եւ այսպիսեաւք
Եւ եւս ընտրականաւք բարեզարդ բառիւք
Միշտ բարեբանեալ քրիստոսեան նշան,

Որ զասպուածագործ պատուասպ պարծանաց
Պատուոյ պսակին ի ձեռ պատկերի քումդ տեսակի մեք ժառանգեցաք:
Եւ մուտն անձուկ դրախտին սենեկի՝
Ի բոցեղէնն սրոյ պարփակեալ,
Քեռ մարդկան ազանց հորդեցաւ:
Եւ սիւնհոդոս կաթողիկէ
Անսասան վերինն Սիոնի
Սիւն եւ նեցուկ նորին ամրոցի
Հաստատ պնդութեամբ դու խարսխեցար:
Վասն այսորիկ
Յաւդակապս բարառնութեան
Փոքր եւ նուազ է քումդ հիացման.
Որ գերազանցդ ես բանից գովութեան[23]:

Այս ներբողում բազմիցս յիշատակւում է նաեւ Կաթողիկէ եկեղեցին, որին «խարսխուել է» Սուրբ Խաչը: Գրիգոր Նարեկացին եւս իր ներբողը կառուցում է «բարառնաբար» (նոյնն է՝ դիմառնաբար), դիմելով Սուրբ Խաչին՝ իբրեւ կենդանի էութեան: Ինչպէս տեսնում ենք, այստեղ նոյնութիւնն ակնյայտ է, որն ինքնին խօսում է Ներբողի՝ Գրիգոր Նարեկացու ստեղծագործութեան վրայ թողած էական ազդեցութեան մասին:

Բարառնաբար է յօրինուած նաեւ Գրիգոր Նարեկացու «Քարոզ եկեղեցւոյ եւ տապանակին Տեառն» գանձը.

Ժողովեալքս ամենեքեան ի սուրբ կաթողիկէ առաքելական եկեղեցի
Երգեմք ի սմա, յոգնախմբեան փառաբանութեամբ երկրային պարաւորքս՝
Ի հոյլս հոգեղէնս, հրաշազանութեամբ
Ընդ արփիափայլ սեռիցն պարակցեալ…
Անեղաշէն խորան, կաթողիկէ սուրբ,
Որ հիմնեցար ի մէջ փիեզերաց այսաւր սուրբ եկեղեցի,
Յաւրինակ արարչագործ եւ գեղեցկատեսիլ
Եդեմատունկ դրախտին փրկութեան…
Եւ մեք, պայծառազուարճ համարձակութեամբ
Երկրային պարաւորքս
Ընդ արփիափայլ սերովբէիցն պարակցեալ…[24]

* * *

Ինչպէս «Ընդդէմ թոնդրակեցւոց» երկի հանրայայտ հատուածում, որ ներբող է Կաթողիկէ եկեղեցուն, այս Ներբողում եւս կիրառում է տրամաբանական-քերականական հասկացութիւնների մի շարք, որ ներհիւսուելով հեղինակի ուրոյն ոճին, այս երկու երկերն, ասես նոյն բնագրի տարբեր մասեր, աղերսում է իրար:

23 «Մատենագիրք Հայոց», ԺԲ, Գրիգոր Նարեկացի, էջ 951:
24 Անդ, էջ 691:

Այս դէպքում եւս, ինչպէս Անանիա Նարեկացու դաւանաբանական մեկնողական երկերում, փեսական ակունքներն են Դաւիթ Անյաղթի, ինչպէս նաեւ Դիոնիսիոս Թրակացու եւ նրա V-VIII դդ. հայ մեկնիչների երկերը:

«Եւ յառեալք հոգւոյ ակամբք, գիտեսցուք զսորա սրբութեանս զաւրութիւն, որ զանազանեալ փարբերի հինգ եղանակաւք ըստ հոլովմանց անուանն բանի, որ ներդատեալ քերդածինդ ենթանկեալ փեսակացն՝ շարադրական, գերադրական, եզական, բագձածական, մակադրական:

Եւ է շարադրականն շինողական, որ յայլազան սեռիցն յարաբարդեալ ժողովի ի մի գոյութիւն:

Եւ գերադրականն՝ գերակայեալ ի փառս եւ ասպուածունակ շնորհիւ առլցեալ:

Եւ եզականն՝ միայնակ յատուկ առանձնապէս որոշեալ ըստ անհատին, որկէն՝ վէմ արձան:

Իսկ բագձագականն՝ պարագայ շրջաւորութեամբն ներփակ առեալ ըստ իրին, որկէն տուն եւ տեղի եւ յարկ ապաւինի, եւ այս ըստ ներտաղական երից ծայրիցն կալմանց:

Եւ մակադրականն՝ մակաւէտ հիւսմամբ շարալծեալ ընդ ասպուածապարգեւ շնորհս Ասպուածն Բանի, կոչի կոչարան եւ բնակարան զաւրութեանն Էմանուէլի, ուսպի եւ ըստ իմացականին ցուցանի հրաշութիւն սորա, վասն զի հայի առ մահ որակութիւն սորա եւ առ կեանս քանակութիւն զաւրութեան սորա»:

Այս հատուածում առկայ է նաեւ կաթողիկէ բառի՝ ըստ իրի ստուգաբանութեան եղանակը, որ դարձեալ հանդիպում է Դիոնիսիոս Թրակացու քերականութեան մէջ եւ այստեղ կիրառում է իբրեւ մեկնութեան տրամաբանական եզրաբառ.

«Իսկ բագձագականն՝ պարագայ շրջաւորութեամբն ներփակ առեալ ըստ իրին, որկէն՝ տուն եւ տեղի եւ յարկ ապաւինի, եւ այս ըստ ներտաղական երից ծայրիցն կալմանց»:

Եթէ այստեղ՝ կաթողիկէ բառն ստուգաբանում է ըստ իրի՝ այսինքն իրեղէն նշանակութեամբ, ապա մի այլ հատուածում՝ ըստ անուան՝ նոյնն է՝ ըստ ձայնի, ըստ իր արտայայտած իմաստի եւ բովանդակութեան, ըստ այդմ՝ կաթողիկէ նշանակում է համընդհանուր: Եւ ինչպէս «Ընդդէմ թոնդրակեցւոց» երկի պահպանուած հատուածում, հեղինակն այս բառի ստուգաբանութեան վրայ է կառուցում Ներբողի այս հատուածը՝ հոմանիշներով ու ճարտասանական ոճերով հարստացնելով այն.

«Աւրհնեալ ես դու, ասպուածազարդ եւ քրիստոսապսակեալ վէմ սուրբն՝ պայծառ եւ պատուական երկնաբարձ աշտարակ, որ ընդ անուան քում պարագրապէս պարունակեալ ունիս զընդհանուր էակս եղանակաց, որ անեզրական ոլորտիւք եւ անծայր ծայրիւք ծայրազարդեալք՝ խրախանալով հրաշազարդապէս պայծառանան ի քո փառս եւ գովեստ եւ ի պատիւ ներդատական եւ ընտրելաշնորհ սուրբ քո անուամբդ կաթողիկէ գոլով յերկրի: Այսինքն՝ բոլորումն իսկ բնաւիցս վերագունեալ բարձրանալով ի փառս եւ ի պատիւ անզուգական եւ անհամեմատ փառաւորեալ եւ անփոփոխելի Սրբոյ Երրորդութեան»:

Այստեղ, ներբողի ժանրի մասին խօսելիս, հեղինակը օգտագործում է «ներդատական եւ ընտրելաշնորհ» եզրերը, որոնք կապւում են Թրակացու քերականութեան վեցերորդ մասի՝ «դատումն քերդածացի» հետ, որ գրական երկերի ստեղծման, կառուցման եւ քննութեան, քննադատութեան նշանակութիւնն ունի: Դրա փարբերակն է Ներբողում տրամաբանական-

քերականական վերոյիշեալ վերլուծութիւնների շարքում տեղ գտած «ներդպրեալ քերդածինդ» արտայայտութիւնը, որը նոյնպէս քերականական-գրականագիտական հասկացութեան նշանակութիւն ունի եւ նոյնանում է դպրումն քերդածաց հասկացութեան հետ: Նարեկեան դպրոցում, մասնաւորապէս Անանիա Նարեկացու խրատներում, այն նաեւ «արուեստ ընտրութեան», «ընտրութիւն եւ արվեստ», «դպրումն ընտրութեան» անուանումներն է ստացել, առաւելապէս կիրառուելով գրական երկի, ստեղծագործական ընթացքի գործուն սկզբունքի ու ներքին կառոյցի ընտրականութան՝ իբրեւ նրա պատճառականութեան եւ խոհական-յուզական հագեցուածութեան կարեւորագոյն միջոցի իմաստով եւ նշանակութեամբ:

Նշուած Ներբողում այս գրականագիտական եզրը ներբողական ժանրի՝ տարբեր եղանակներով կառուցման եւ դրանց քննութեան իմաստն ունի:

«Եւ յառեալք հոգւոյ ակամբք՝ դիտեսցուք զսորա սրբութեանս զարութիւն, որ զանազանեալ տարբերի հինգ եղանակաւք... որ ներդպրեալ քերդածինդ ենթանկեալ տեսակացն՝ շարադրական, գերադրական, եզական, բազձածական, մակադրական» (123):

Բոլոր այս փաստերը վկայում են, որ յանձին Ներբողի հեղինակի, մենք գործ ունենք նաեւ բանաստեղծական արուեստի տեսաբանի հետ, որպիսին էր Անանիա Նարեկացին:

* * *

Ինչպէս նշել ենք, մեծ է Ներբողի ազդեցութիւնը յատկապէս Գրիգոր Նարեկացու ներբողական ժանրի երկերի եւ գանձերի վրայ, որը յաճախ բերում է նոյնութիւնների, համընկնումների, բառապատկերային նոյնայենք տարբերակների: Մէջ բերենք մի օրինակ:

**Ներբող**

«...Հոգին Սուրբ զիմանալի եւ զասպուածածագն լոյս ջահեցուցանելով, որով լուսով եւ սկզբնապպին տեսեալ ճանաչի անիմանալի եւ անճառելի լուսոյն ճառագայթ...»:

**«Ներբող ի սուրբ Յակոբ Մծբնայ»**

«Մի յեթենեակ բերանոյ լուսապատրոյգ, ճաճանչեղ, փիրազաւր ... անճառապատկեր եւ խորախորհուրդ աշխանակակիր ճրագացն տեսանողին ջահացեալ»[25]:

Եւս մի հատուած «Քարոզ Եկեղեցւոյ» գանձից.

Արփիափայլ խորան, արեգակնահրաշ ճառագայթիք ջահաւորեալ...
Քառանկիւն տաճար՝ գերահրաշ ծագմամբ,
Ջթափանցիկ լուսով ճառագայթեալ...
Միշտ ի քեզ երեւի՝ փոխանակ տեառնագրեալ տախտակացն.
Քառաջահեան տաճար,
Գերահրաշ ճառագայթիքն լուսաւորեալ ի մէջ տիեզերաց...[26]

25 «Մատենագիրք Հայոց», ԺԲ, Գրիգոր Նարեկացի, էջ 953:
26 Անդ, էջ 693-693:

Ներբողը կապւում է նաեւ Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի» մեկնութեան հետ: Զուգադրենք երկու հատուածներ.

| Ներբող | Մեկնութիւն |
|---|---|
| *«Եւ այս խսկ է խորութիւն անհաս խորհրդոյ հարսին եւ փեսային, որ յԵրգս երգոցն* շաղաշարումն շաղկապութեան *յոգնեռանդն առ միմեանս* սեռն սիրոյն *առաւելութիւնք»* | *«... Եւ զայլն ամենայն այսպիսեաց բանից պոռնկանաց եւ արբից խրդղրանաց* սեռն սիրոյ շաղկամն միաւորութեան...»[27]: |

Ինչպէս տեսնում ենք, այստեղ նոյնութիւնն ակնյայտ է. մենք գործ ունենք բնագրային համընկնումի հետ, որ կապուած է «Երգ երգոցի» նոյնօրինակ մեկնաբանութեան հետ: Այն մէկ անգամ եւս վկայում է ներբողի՝ Գրիգոր Նարեկացու վրայ թողած ուղղակի ազդեցութեան մասին:

Գրիգոր Նարեկացին նոյն այդ արտայայտութիւնն օգտագործել է նաեւ իր այլ երկերում: Այսպէս, «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ ասացեալ» երկում, որն սկսւում է «Հայեա՛ց յանձն քո...» բնաբանով, կարդում ենք. «Գութ արարչական խնամոցն Աստուծոյ եւ անդունդք՝ սեռն եւ յսպակ սիրոյ նորա...»:

Նոյն արտայայտութիւնն է օգտագործուած նաեւ «Մատեան»-ի յիշատակարանում. «Արդ, հայցեմք... յիշատակել զմեզ ի մաղթանս ուղիղս եւ ի պատկանաւոր խնդրուածն՝ սեռն սիրով ի միտս բարիս...»:

Նման բնագրային համընկնումներ կան նաեւ Ներբողի եւ Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն «Ով է Դա»-ի» երկերի միջեւ.

| Ներբող | Մեկնութիւն «Ով է Դա»-ի |
|---|---|
| *«Եւ փոխանակ եռանդապտոյտ կայծակնատարափ շանթիցն ցոլմանց՝ի սէբովբէաստարափ սպրուածակայծակն սեղանոյն առ լցմանէ* արտաշիկագոյն *արփաձգութեամբ իբր յեռանդնուտ քրայէ հրանուտ հուրմամբ՝ արտաքս արձակեա: Եւ* հրախառն կայլակաք կողահոս հիւթից *յորդաստի վտակաց ամենակեցոյց բոլորիցն Արարչի...»:* | *«...Ոսկէպատեան* արտաշիկագոյն հրախառն սուրբ արեամբն *մատուռակեալ ի ձեռանէ Տեառն»[27]:* |

Բազմաթիւ եւ բազմազան են այս Ներբողի պոետիկայի ազդեցութիւնները Գրիգոր Նարեկացու ստեղծագործութեան վրայ, որն ակնյայտ է նաեւ արտայայտչամիջոցների՝ առձայնոյթի եւ բաղաձայնոյթի բնագաւառում: Բերենք բնորոշ օրինակներ:

---

27 Անդ, էջ 908:

«Անդանաւր յորդեալ ծովանայ ապայ եւ ծովն ծիրանածաւալ…:
Ասպուածահրաշն հրախառնեալ մաքրագործակ ծիրանափայլ ծովուն գոլով ընդունակ»

(Ներբող)

Այժմ տեսնենք, թէ բաղաձայնոյթներով զեղուն այս պատկերը ինչ արտայայտութիւններ, ելեւէջներ ու նրբաւորումներ է ստացել Գրիգոր Նարեկացու տաղերում:

Հոսէր, իջանէր անդր ի ծովն առաջին,
Խաղայր, ծաւալէր անդր ի ծովն, որ յեզոյ…
Ծաւալ ծով ծիծաղ՝ քաղցր աւդով շարժենայր…
Արփիապեսակ ճառագայթիւք փայլեալ,
Ծիր ի ծիրանոյ վառ վառեալ ըզդէմս:

(«Տաղ եկեղեցւոյ»)

Ի վեր ի վերայ վարսից
Ծաւալէր ծաղիկ ծովային:
Ի համապարած ծովէն
Պղպջէր գոյնն այն ծաղկին…

(«Տաղ Վարդաւառին»)

Ազդեցութիւններն այնքան մեծ են, որ հանգեցնում են նոյնապիպ բառ-պատկերների ու լեզուական կաղապարների օգտագործման: Դրա գեղեցիկ օրինակն է տալիս Գրիգոր Նարեկացու «Տաղ Յարութեան»-ը.

| Ներբող | «Տաղ Յարութեան» |
|---|---|
| *Այրինեալ եւ, խորան սուրբ…*<br>*Լուսաճեմ ճառագայթիւք*<br>*Եւ անընդհատ* լուսով փաղփեալ փայլմամբ…<br>… Գերազանցիկ լուսոյն *զճառագայթս*<br>*Անճառ եւ անհնար սիրոյն Քրիստոսի*<br>*Յերկրի մերում սփռեալ,*<br>*Ծաւալեալ տարածեցեր* | *Գեր քառանիւթեայք պաղպաջ երկնի*<br>փայլ փայլ,<br>Փայլք փաղփինապար անծայրենի լոյս.<br>Լոյս գերազանցիկ *երկնաշաւիղ ռահ,*<br>*Ռահ արքունաճեմ վերայ ծովու քայլ…* |

Փոխանցում են բառ-պատկերները, պատկերաւոր արտայայտութիւնները՝ վերածուելով լեզուական հանգոյցների, որոնք ներհիւսում են այդ բնագրերը:

| Ներբող | «Մատեան» |
|---|---|
| *Անծայր ծայրիւք ծայրազարդեալք՝*<br>*Ուրախանալով* հրաշազարդապէս<br>պայծառանան...<br>*Սուրբ քեռ անուամբդ՝կաթողիկէ գոլով*<br>*յերկրի...* | *Նոյնպէս եւ մաքրեալն քոյինաշունչ*<br>*շնորհին*<br>*Ընդրութեամբ ի մէջ անդրեսիդ*<br>Հրաշափառապէս պայծառացուցանէ»<br>*(ՂԳ, Դ)* |

Ինչպէս տեսնում ենք, Ներբողի իմաստային, գունային, հնչողական ներդաշնութիւնը փոխանցուել է Գրիգոր Նարեկացուն՝ արտայայտուելով նոր նրբաւորումներով ու խաղացկուն կառոյցներով:

Բնագրային այս նոյնութիւնների, համընկնումների, փոխանցումների, նորաբանութիւնների ու նորակազմութիւնների, իւրօրինակ ոճի ու եզրաբանութեան շարքը կարելի է երկար շարունակել:

Մենք մէջ բերեցին միայն ամենաբնորոշ օրինակները, որոնք վկայում են, որ ի դեմս երկի խորագրում յիշուող Անանիայի՝ մենք գործ ունենք ճարտասան-բանաստեղծի եւ գեղագէտ-փիլիսոփայի հետ, որի այս երկն ակնյայտ ազդեցութիւն է թողել Գրիգոր Նարեկացու ստեղծագործութեան վրայ:

Ներբողի ազդեցութիւններն ակնյայտ են, փաստօրէն, Գրիգոր Նարեկացու բոլոր ժանրերի երկերի՝ «Մատեանի», գանձերի եւ տաղերի, մեկնութիւնների եւ ներբողների վրայ: Դրանք վկայում են, որ այս գործը նախորդում, ոչ թէ յաջորդում է Գրիգոր Նարեկացու ստեղծագործութեանը՝ աղբիւր եւ ազդակ հանդիսանալով նրա համար:

Հակառակ պարագային պէտք է ընդունենք, որ ենթադրեալ հեղինակը՝ ներհմուտ գիտելիքների տէր, մեծ տեսաբան եւ տաղանդաւոր բանաստեղծ լինելով՝ բանաստեղծական իր քերթուածում ծաղկաքաղ է արել Անանիա եւ Գրիգոր Նարեկացիների բոլոր ժանրերի երկերից: Այսինքն, ոչ միայն ծանօթ, այլ խորագիտակ է եղել նրանց բոլոր ստեղծագործութիւններին: Անանիա Սանահնեցին նման բանաստեղծ-տեսաբան եւ նարեկացիագէտ չէր:

Այսպիսով, բազմաշերտ ու բազմաբնոյթ փաստերը վկայում են, որ Ներբողի հեղինակը՝ «երանելի հոգեշնորհ Անանիայ փիլիսոփան», Անանիա Նարեկացին է՝ Նարեկեան հռչակաւոր դպրոցի հիմնադիրը, որն իր բանաստեղծական արուեստի նորարարական տեսութեամբ եւ բանաստեղծութիւններով ուղի է հարթել իր հանճարեղ աշակերտի՝ Գրիգոր Նարեկացու համար:

Ներբողը, մեր կարծիքով, գրուել է մինչեւ 977 թ., որը Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի» գրման տարեթիւն է, քանի որ մեկնութեան մէջ, ինչպէս նշել ենք, Ներբողի ակնյայտ ազդեցութեան հետքեր կան:

Այս երկը կարեւոր օղակ է Նարեկեան դպրոցի զարգացման շղթայի պատմութեան մէջ, որն առաւել տեսանելի է դարձնում եւ մեծապէս հարստացնում Անանիա եւ Գրիգոր Նարեկացիների միջեւ բազմաբիւր եւ բազմաճիւղ տեսական եւ ստեղծագործական կապերի պատմութիւնը, առատ նիւթ տալով հետագայ ուսումնասիրութիւնների համար: